ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«15» Նոյեմբեր 2017թ. N 16

ք. Արմավիր

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թվականի մայիսի 6-ի ՆՀ- 728 հրամանագրի 1. 15-րդ կետի թ/ ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության 2017թվականի աշխատանքային ծրագիրը՝ մարզի տարածքում գործող <<Ոռոգում - Ջրառ>> փակ բաժնետիրական ընկերության մասնաճյուղերի և երկու ջրօգտագործողների ընկերությունների կողմից ոռոգման սեզոնի նախապատրաստական աշխատանքների կատարման ընթացքը համակարգելու, ոռոգման ցանցերի մաքրման և վերանորոգման աշխատանքների կատարման ընթացքը և համակարգի արդյունավետ շահագործումը կարգավորելու նպատակով՝

Կարգադրում եմ.

Ստեղծել հանձնաժողով համաձայն հավելվածի:

1. Հանձնաժողովին /Ա.Այվազյան/՝ հանձնաժողովի աշխատանքներին մասնակից դարձնել <<Ոռոգում - Ջրառ>> փակ բաժնետիրական ընկերության համապատասխան մասնաշյուղերի մասնագետներին, ջրօգտագործողների ընկերությունների գործադիր տնօրեններին և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների ղեկավարներին / համաձայնությամբ/:
2. Հանձնաժողովին /Ա.Այվազյան/՝ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել 20-օրյա ժամկետում և արդյունքների վերաբերյալ պարբերաբար զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:
3. Հանձնաժողովին /Ա.Այվազյան/ ստուգայցերի և ուսումնասիրությունների ժամանակ թերություններ և բացթողումներ հայտնաբերելու դեպքում հարցը քննարկել ջրօգտագործողների ընկերությունների վարչական խորհրդի նիստում, ձեռնարկել գործնական միջոցներ հարցի կարգավորման ուղղությամբ:
4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը /Վ.Մկրտչյան/ սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:
5. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ՝ Լ.ՄՈՒՐԱԴՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետի
2017 թվականի Մարտի 25-ի
N16 կարգադրության

ԿԱԶՄ

Հանձնաժողովի նախագահ՝

Ա. Այվազյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ

Անդամներ

Մ. Սարիբեկյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի պետ

Ս.Մխիթարյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի գլխավոր մասնագետ

Կ.Պետրոսյան Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի գլխավոր մասնագետ

Գ. Մելիքյան Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության բնապահպանության բաժնի պետ

Վ.Միրզախանյան Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ

Կ. Մարգարյան

Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզպետարանի աշխատակազմի
գյուղատնտեսության և բնապահպանության
վարչության բնապահպանության բաժնի
առաջատար մասնագետ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ՝ Ա.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ